ԱՐԳԻՇԹԻ I ԱՐՔԱՅԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՆԵՐԻ ՎԵՐԱԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

Ուրարտագիտության մեջ և հատկապես խորհրդային հեղինակների շրջանում գերիշխում էր ուրարտական արքաների համար Բորիս Պիոտրովսկու առաջարկած ժամանակագրությունը[1]: Այն իր հերթին հենվում էր Կառլ Ֆրիդրիխ Լեման-Հաուպտի կազմած ժամանակագրական սանդղակի վրա՝ վերջինից տարբերվելով, մասնավորապես, առաջին արքաների հաջորդականության հարցում[2]: Մասնակի փոփոխություններ տեղ գտան միայն հետագայում, երբ, հենվելով Կարմիր Բլուրի պեղումներից ձեռք բերված գրավոր վկայությունների վրա, առաջարկվեց ուրարտական արքայացանկը համալրել նոր անուններով՝ ցանկում ներառված արքայանունների թիվը հասցնելով տասնչորսի[3]:

Բավական կուռ թվացող այդ ցանկում իրականում մեծ է անորոշությունը և պետք է փաստենք, որ միայն երկու դեպքում կարող ենք վստահ խոսել արքաների ուղիղ հաջորդականության մասին: Առայժմ անկասկած է, որ Իշպուինիին հաջորդել է նրա որդի Մենուան, ով, ինչպես կարծում են, իշխանության էր եկել հոր հետ, այսպես կոչված, «համատեղ գահակալություն»-ից հետո, իսկ Մենուայի որդի Արգիշթիին հաջորդել է նրա որդի Սարդուրին: Անորոշությունը հատկապես մեծանում է, երբ մենք գործ ենք ունենում չորս Սարդուրիների և չորս Ռուսաների հետ, ի լրումն այն անունների, որոնց կարելի է տեսնել Ուրարտուի գահին: Այդ նույնը վերաբերում է նաև արքաների կառավարման տարիներին: Այդ հարցերի շուրջը ծավալված նոր քննարկումները[4] չշրջանցեցին նաև Մենուայի որդի Արգիշթիի գահակալության ժամանակաշրջանի խնդիրը[5]:

---

[1] Б. Б. П и о т р о в с к и й. История и культура Урарту. Ереван, 1944, с. 36 сл.; *Նույնի*՝ Ванское царство (Урарту). М., 1959, с. 41 сл.

[2] *Հմմտ.* C. F. L e h m a n n – H a u p t. Das urartäisch-chaldische Herrscherhaus.– „Zeitschrift für Assyriologie und Vorderasiatischer Archäologie“, Bd. 33, 1921, S. 28sqq.

[3] N. V. A r o u t i o u n i a n. Problèmes concernant la dernière période de l’histoire d’Urar‹u.– “Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae”, T. 22/1-4, 1976, p. 106f., 111f.

[4] U. S e i d l. Bronzekunst Urartus. Mainz am Rhein, 2004, S. 123sq.; *Նույնի*՝ Wer gründete RusaÆinili/Toprakkale? .– “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, vol. 2, 2007, 137sqq.; *Նույնի*՝ Rusa son of Erimena, Rusa son of Argišti and Rusahinili/Toprakkale.– S. K r o l l, C. G r u b e r, U. H e l l w a g, M. R o a f, P. Z i m a n s k y (eds.), Biainili-Urartu. The Proceedings of

Արգիշթի Մենուայորդին Վանա ժայռին թողել է իր ընդարձակ տարեգրությունը[6]: Այն հայտնի է «Խորխորյան տարեգրություն» անունով և կազմված է 8[7] սյունակից: Ցավոք, տարեգրության սկիզբը, որն արձանագրված է եղել առանձին կոթողի վրա, մեզ չի հասել[8]:

Արգիշթի Մենուայորդին ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում է ասորեստանյան բանակի գլխավոր զորավար Շամշի-իլուի արձանագրություններում,

the Symposium held in Munich 12-14 October 2007.– "Acta Iranica", № 51. Louvain, 2012, p. 177ff.; S. K r o l l. Rusa Erimena in archдologischem Kontext.– S. K r o l l, C. G r u b e r, U. H e l l w a g, M. R o a f, P. Z i m a n s k y (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007.– "Acta Iranica", № 51. Louvain, 2012, S. 183sqq; M. R o a f. Could Rusa Son of Erimena Have Been King of Urartu during Sargon's Eighth Campaign? .– S. K r o l l. C. G r u b e r, U. H e l l w a g, M. R o a f, P. Z i m a n s k y (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007.– "Acta Iranica", № 51. Louvain, 2012, p. 177ff.; S. K r o l l. Rusa Erimena in archдologischem Kontext.– S. K r o l l, C. G r u b e r, U. H e l l w a g, M. R o a f, P. Z i m a n s k y (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007.– "Acta Iranica", № 51. Louvain, 2012, p. 187ff.; M. S a l v i n i. Le due stele di Rusa Erimena i dal Keşiş Gцl.– "Studi Micenei ed Egeo-Anatolici", № 48, 2006, p. 209ss.; *Նույնի՝* Argišti, Rusa, Erimena, Rusa und die Lцwenschwдnze: Eine urartдische Palastgeschichte des VII. Jh. v. Chr.– "Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies", vol. 2, 2007, p. 146sqq.; *Նույնի՝* Rusa I. II. III. (*Ru-sa*(-*a*)-).– "Reallexikon der Assyriologie und Vorderasiatischer Archäologie", Bd. 11·5./6., 2007, S. 465sq.

[5] A. F u c h s. Urarṭu in der Zeit.– S. K r o l l, C. G r u b e r, U. H e l l w a g, M. R o a f, P. Z i m a n s k y (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007.– "Acta Iranica", № 51. Louvain, 2012, S. 149sqq.

[6] Г. А. М е л и к и ш в и л и. Урартские клинообразные надписи (*այսուհետև՝* УКН). М., 1960, № 127; Н. В. А р у т ю н я н. Корпус урартских клинообразных надписей (*այսուհետև՝* КУКН). Ереван, 2001, № 173; M. S a l v i n i. Corpus die testi urartei, vol. I. Le iscrizioni su pietra e roccia: I Testi (*ЗЫлбхС»п¨՝* CTU I).– "Documenta Asiana", 2008 VIII/1. Roma, n. A 8-3.

[7] *«Խորխորյան տարեգրություն»-ն ուսումնասիրած հեղինակներից Նիկոլայ Հարությունյանը և Իգոր Դյակոնովը* УКН, 127 VII (= КУКН, 173 VII; CTU I, A 8-3 VII) *տեքստը չեն դիտարկում որպես տարեգրության մաս: Այս մասին տե՛ս և հմմտ.* НяВяАяряуятяюяняяянхяХорхорскаяя летописьяАргиштияIияцаряяУрарту.–я«ЭпиграфикаяВостока»ияхтяхя7ия1953иясхя116ияпримхя4;яИхяМхя Дьяконовхя Рецхяная кнхя Гхя Ахя Меликишвилихя Древневосточныеяматериалыяпоя историия народовяЗакавказьяияIхяНаири – Урарт3хяТбилисия1954х– «Вестникядревнейяистории»ия1956ия №я2ияхя70х

[8] *Տարեգրության կառուցվածքի համար տե՛ս և հմմտ.* ծ. Թ. ԸՐցՅ՝վ ÿվ. *Նշվ. աշխ., էջ 81 և հաջորդում,* M. S a l v i n i. Geschichte und Kultur der Urartäer. Darmstadt, 1995, S. 57; B. A n d r é - S a l v i n i, M. S a l v i n i. Gli Annali di Argišti I – Note e collazioni.– "Studi Micenei ed Egeo-Anatolici", 30, 1992, p. 9ss.

ով հայտնում էր ուրարտական արքային հաղթելու մասին[9]: Շամշի-իլուն Ք. ա. 780 թ. էպոնիմն էր[10], ուստի և ենթադրվել է, որ Արգիշթիի նկատմամբ ձեռք բերված հաղթանակը տեղի է ունեցել նրա էպոնիմատի տարում[11]: Ասորեստանի հետ բախում «Խորխորյան տարեգրություն»-ը հայտնում է Արգիշթիի կառավարման 6-րդ (՞), 7-րդ (՞) և 9-րդ (՞) տարիների համար[12]՝ ըստ Գեորգի Մելիքիշվիլու վերակազմության[13]: Դեպի Ուրարտու ձեռնարկված արշավանքների մասին է հայտնում նաև ասորեստանյան էպոնիմների ցանկը՝ սկսած Ք. ա. 781 թ. ընդհուպ մինչև Ք. ա. 774 թ. բացառությամբ Ք. ա. 777 և 775 թթ.[14]:

Գեորգի Մելիքիշվիլին Արգիշթիի կառավարման 6-րդ (՞) տարվան վերաբերող «Խորխորյան տարեգրության» տեղեկությունը ասորեստանյան զորքին հաղթելու մասին նույնացնում էր Ք. ա. 781 թ. Ուրարտու ձեռնարկված ասորեստանյան առաջին արշավանքի հետ: Ըստ այդմ, Ք. ա. 786 թ. դառնում էր Արգիշթիի գահակալության առաջին տարին[15]:

Այդ մոտեցումը վիճարկեց Իգոր Դյակոնովը: Նա գտնում էր, որ «Խորխորյան տարեգրության» 6-րդ (՞) տարվա տեղեկությունը ասորեստանյան զորքին հաղթելու և դեպի Բաբիլոնի երկիր արշավելու մասին[16] պետք է զուգադրել Իշթարդուրիի էպոնիմատի տարում՝ Ք. ա. 774 թ. [Արգիշթիի կառավարման 7-րդ (՞) տարին ըստ Ի. Դյակոնովի], Ուրարտու և Նամրի ձեռնարկված ասորեստանյան պատասխան արշավանքի հետ, քանի որ, նրա կարծիքով, հենց Նամրի երկիրն է ուրարտական տեքստերում հանդես գալիս իբրև «Բաբելոնիա» (URU *babilu*(*ni*) KUR*ebani*)*[17]: Ըստ այդմ, Արգիշթիի կառավարման սկիզբը պետք է համարել Ք. ա. 780/779 թ.[18]: Հենվելով*

---

[9] A. K. G r a y s o n. Assyrian Rulers of the Early First Millennium B.C. (858–745 B.C.).– The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods, vol. III. Toronto – Buffalo – London, 1996, p. 231ff. (A.0.104.2010–2011).

[10] A. M i l l a r d. The Eponyms of the Assyrian Empire 910–612 B.C.– "State Archives of Assyrian Studies", 2, 1994, pp. 38, 58.

[11] Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту), с. 41.

[12] *Տե՛ս, համապատասխանաբար,* КУКН, 173 II51-III6, III20-32; IV14-36; CTU I, A 8-3 II51-III6, A 8-3 III14-32, A 8-3 IV14-36 ***տեքստերը:***

[13] Г. А. М е л и к и ш в и л и. Древневосточные материалы по истории народов Закавказья I. Наири-Урарту, с. 214 сл.

[14] A. M i l l a r d. *Նշվ. աշխ., էջ 38–39, 58:*

[15] Г. А. М е л и к и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 210: *Տե՛ս, դեռևս,* C. F. L e h m a n n - H a u p t. *Նշվ. աշխ., էջ* 28 (ca. 785-765/760)*:*

[16] КУКН, 173 III11; CTU I, A 8-3 III11.

[17] И. М. Д ь я к о н о в. Ассиро-вавилонские источники по истории Урарту.– §Вестник древней истории¦, 2, 1951, № 38, прим. 6.

[18] И. М. Д ь я к о н о в. *Նշվ. աշխ., էջ 68–69, Նույնի՝* История Мидии от древнейших времен до конца IV века до н. э. М.–Л., 1956, с. 170.

նույն փաստարկների վրա՝ նման կարծիք է հայտնում նաև Անդրեաս Ֆուքսը՝ Արգիշթիի գահակալության շրջանը թվագրելով Ք. ա. 779–756 թթ-ով[19]*:*

Ընդհուպ մինչև 2000-ական թվականները մասնագիտական հրատարակություններում այս խնդիրը սկզբունքային հարց չէր դիտարկվում և նախապատվությունը տրվում էր մեկ այս, մեկ այն կարծիքին[20]*: Իսկ խորհրդային հայագիտության մեջ արմատավորվեց Գ. Մելիքշվիլու առաջարկած թվագրումը*[21]*:*

Համընդհանուր մոտեցում գտած այս երկու տեսակետներից յուրաքանչյուրն էլ հակասության մեջ է մտնում «Խորխորյան տարեգրության» և ասորեստանյան աղբյուրների տվյալների հետ: Օրինակ, եթե ընդունենք, որ Ք. ա. 774 թ. համապատասխանում է Արգիշթիի կառավարման 7-րդ (՞) տարվան, ինչպես նշում էր Ի. Դյակոնովը, ապա այդ դեպքում ստիպված ենք ընդունել նաև, որ ասորեստանյան նախորդ հինգը արշավանքները (Ք. ա. 781–778 և 776 թթ.) որևէ կերպ չեն արտացոլվել «Խորխորյան տարեգրության» մեջ: Բացի այդ, պետք է ընդունենք նաև, որ արքայի կառավարման 9-րդ (՞) տարում ձեռնարկված ուրարտական արշավանքը չի արտացոլվել այս անգամ արդեն ասորեստանյան աղբյուրներում:

Նման մոտեցումը հիմնավորված չէ: Մասնավորապես, Ք. ա. 774 թ. որպես Արգիշթիի կառավարման 7-րդ (՞) տարի ընդունելու դեպքում նախորդ՝ 6-րդ (՞) տարվա համար (Ք. ա. 775 թ. ըստ Ի. Դյակոնովի) ասորեստանյան էպոնիմների ցանկում հանդիպում ենք դեպի «մայրիների լեռ» (իմա՝ Լիբանան) ուղղված արշավանքի մասին տեղեկությանը, այն դեպքում, երբ «Խորխորյան տարեգրություն»-ը նշում է, որ ասորեստանյան զորքը ներխուժել է Ուրարտու (^{K}[^{UR}]*aš*-[*šur* ^{LÚ}A.S]I^{MEŠ}-*şi*-*e* ^{KUR}*e*-

[19] A. F u c h s. Der Turtān Šamšī-ilu und die große Zeit der assyrischen Großen (830-746).– „Die Welt des Orients“, Bd. 38, 2008, S. 81sq., 133; *Նույնի՝* Urarṭu in der Zeit, S. 150sqq.

[20] Б. Б. П и о т р о в с к и й. Ванское царство (Урарту), с. 43; M. N. v a n L o o n. Urartian Art. Its Distinctive Traits in the Light of New Excavations. Istanbul – Leiden, p. XV, 11ff.; M. S a l v i n i. Geschichtlicher AbriЯ.– H. - J. K e l l n e r (Hrsg.), Urartu: Ein wiederentdeckter Rivale Assyriens. Katalog der Ausstellung. Mьnchen, 1976, S. 11sq., 15; *Նույնի՝* Geschichte und Kultur der Urartдer, S. 207 (Zeittaffel); *Նույնի՝* Das Corpus der urartäischen Inscriften.– S. K r o l l, C. G r u b e r, U. H e l l w a g, M. R o a f, P. Z i m a n s k y (eds.), Biainili-Urartu. The Proceedings of the Symposium held in Munich 12-14 October 2007.– “Acta Iranica”, № 51. Louvain, 2012, p. 133. *Գ. Մելիքիշվիլու առաջարկած թվագրումից քիչ էր տարբերվում Ֆրիդրիխ Վիլհելմ Քյոնիգի տեսակետը, ով Արգիշթիի գահակալության սկիզբը համարում էր Ք. ա. 789 թ. (Ք. ա. 789–765 թթ.). տե՛ս* F. W. K Φ n i g. Handbuch der chaldischen Inschriften, I.– “Archiv fЭr Orientforschung”, Beiheft 8/I. Graz, 1955, S. 1.

[21] *Տե՛ս, օրինակ, Ն. Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Երևանի հիմնադրման ժամանակի հարցի շուրջը.– ՊԲՀ, 1959, - 2–3, էջ 81 և հաջորդիվ, նույնի՝* Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики. Ереван, 1970, с. 179–180; *Յ. Կ ա ր ա գ է ո զ է ա ն. Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբիւրներում, հ. I, գիրք 1. Սեպագիր տեղանուններ, Երևան, էջ 67 և այլուր:*

ba-ni-[O]-ki aš-du)[22]: Ընդ որում, տվյալ տարվա, այսպես կոչված, «վերնագրային բանաձև»-ում նշվում է Ասորեստանի զորքին հաղթելու մասին (*ka-ru-ni* KUR*aš-šur* LØh*u-ra-di-e*)[23], ինչից ևս բխում է, որ նախահարձակ կողմն Ասորեստանն էր, ում զորքը գտնվում էր ուրարտական տարածքում[24]:

Ակնհայտ է, որ ասորեստանյան զորքին հաղթելու մասին տարեգրության տեղեկությունը պետք է վերաբերեր այդ շրջանում դեպի Ուրարտու ուղղված ասորեստանյան մյուս հինգ արշավանքներից որևէ մեկին, ինչն արդեն իսկ բացառում է առաջարկված վերակազմությունը[25]:

Գ. Մելիքիշվիլու առաջարկած թվագրության դեպքում նույնպես հակասություն է ծագում «Խորխորյան տարեգրության» և ասորեստանյան էպոնիմների ցանկի միջև այն դեպքերի համար, երբ ասորեստանյան աղբյուրի տեղեկությունները դեպի Ուրարտու ձեռնարկված արշավանքի մասին իրենց արտացոլումը չեն գտնում ուրարտական տեքստերում: Խոսքը վերաբերում է ասորեստանյան վեցը արշավանքներից երեքին՝ Ք. ա. 779, 776 և 774 թթ.[26]:

Արգիշթիի նկատմամբ Շամշի-իլուի ձեռք բերած հաղթանակը, ինչպես վերը նշվեց, թվագրվում է Ք. ա. 780 թ.՝ զորավարի առաջին էպոնիմատի տարով: Ընդ որում, Ք. ա. 779 թ. թվագրվող Կալխուի դիվանի տեքստերում ուրարտացի գերիների հիշատակության փաստը[27] կարող է հավաստել ոչ միայն Շամշի-իլուի խոսքերը՝ Արգիշթիին հաղթելու մասին, այլև վկայել, որ այդ հաղթանակը տեղ է գտել հենց նախորդ՝ Ք. ա. 780 թ.:

Ասորեստանյան զորավարն իր հաղթանակը հավերժացրել էր թողնելով երեք կոթող: Դրանցից երկուսը հայտնաբերվել են Թիլ-Բարսիպից (ներկայիս Թելլ Ահմար հնավայրը հյուսիսային Սիրիայում[28]) և արձանագրված են առյուծների երկու

---

[22] КУКН, 173 II57 – III1; CTU I, A 8-3 II57-III1. *Այս հատվածի թարգմանության համար տե՛ս* Ն. Վ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. *Նոր դիտարկումներ ուրարտական սեպագրերում.– «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», 2006, պր. 25, էջ 197 և հաջորդիվ: Հմմտ. նաև ստորև՝ ծնթ. 24:*

[23] КУКН, 173 II52; CTU I, A 8-3 II52.

[24] *Նման թարգմանության հնարավորության վրա մեր ուշադրությունը հրավիրեց բ. գ. դ. Մարգարիտ Խաչիկյանը, ում հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:*

[25] *Հմմտ.* И. М. Д ь я к о н о в. Рец. на кн.: Г. А. Меликишвили. Древневосточные материалы…, с. 68–69.

[26] *Հմմտ.* Г. А. М е л и к и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 232–233:

[27] J. V. K i n n i e r – W i l s o n. The Nimrud Wine List. A Study of Men and Administration at the Assyrian Capital in the Eighth Century, B.C.– “Cuneiform Text from Nimrud”, vol. 1, London, 1972, p. 93f.

[28] F. T h u r e a u - D a n g i n, M. D u n a n d. Til Barsib, Album.– “Bibliothèque archéologique et historique”, 23. Paris, 1936, Pl. XXXVII.

հսկայական արձանների վրա[29], իսկ երրորդը, որն արձանագրվել է քարակոփ կոթողի վրա[30], գտնվել է Դոհուկի շրջանից (հյուսիսային Իրաք)[31]: Մյուս կողմից, տարբեր վայրերում թողնված արձանագրությունները հիմք են ծառայել ենթադրելու, որ Շամշի-իլուն Արգիշթիի դեմ ձեռնարկել է միաժամանակ երկու արշավանք՝ մեկը, թերևս, դեպի Ուլլուբա, որը տեղորոշվում է Դոհուկի մերձավորությամբ, իսկ երկրորդը՝ ինչ-որ տեղ՝ վերինեփրատյան գոտում[32]: Շամշի-իլուի պնդմամբ՝ ճակատամարտ(եր)ում ուրարտական զորքերին առաջնորդել է անձամբ Արգիշթին:

Կարծում ենք, տրամաբանական կլինի ենթադրել, որ ասորեստանյան զորավարի երկու արշավանքները տեղ են գտել ոչ թե մեկ տարում, այլ՝ երկու: Դրանք կարելի է նույնացնել դեպի Ուրարտու ձեռնարկված ասորեստանյան առաջին երկու արշավանքների հետ, այն է՝ Ք. ա. 781 և 780 թթ.: Ընդ որում, պատահական չէ, որ առաջին արշավանքը համապատասխանում է ասորեստանյան նոր արքա Սալմանասար IV-ի (Ք. ա. 781–772 թթ.) գահակալության ու նրա իսկ էպոնիմատի տարվան և կարող էր իրագործված լինել նրա գլխավորությամբ կամ նրա հրամանով[33]:

Այդ տարիները, ըստ Գ. Մելիքիշվիլու վերակազմության, համապատասխանում են Արգիշթիի կառավարման 6-րդ (՞) և 7-րդ (՞) տարիների հետ: Սակայն, կարծում ենք, որ Արգիշթիի կրած պարտությունները Շամշի-իլուից պարզապես տեղ չեն գտել տարեգրության մեջ, իսկ ասորեստանյան զորքին հաղթելու մասին «Խորխորյան տարեգրության» առաջին տեղեկությունը վերաբերելու է Ք. ա. 779 թ.՝ Մարդուկ-ռեմաննիի էպոնիմատի տարում դեպի Ուրարտու ձեռնարկված թվով երրորդ արշավանքին[34]: Այդ դեպքում, Ք. ա. 778 թ.՝ Բել-լեշիրի էպոնիմատի տարում դեպի

---

[29] A. K. G r a y s o n. *Նշվ. աշխ., էջ 231 և հաջորդիվ* (A.0.104.2010):

[30] C. F. L e h m a n n - H a u p t. Materialen zur älteren Geschichte Armeniens und Mesopotamiens.– “Abhandlungen der königlichen Gesellschaft der Wissenschaften zu Göttingen”, philologisch-historische Klasse, Neue Folge 9/3. Berlin, 1907, S. 45sqq., Fig. 22.

[31] A. K. G r a y s o n. *Նշվ. աշխ., էջ 233 և հաջորդիվ* (A.0.104.2011):

[32] *Տե՛ս և հմմտ.* И. М. Д ь я к о н о в. *Նշվ. աշխ., էջ 69–70, ծնթ. 1,* A. F u c h s. Urarțu in der Zeit, S. 150.

[33] *Այս առումով պետք է նշել, որ, հավանաբար, Արգիշթիի դեմ ուղղված արշավանքին է վերաբերում, ամենայն հավանականությամբ, Սալմանասար IV-ի անունով թողնված տեքստը (արքայի անունը չի պահպանվել): Խիստ պակասավոր տեքստը նամակ-զեկույց է ուղղված աստվածներին և թվագրվում է Շամշի-իլուի էպոնիմատի տարով (տե՛ս* K. G r a y s o n. *Նշվ. աշխ., էջ 243–244* (A.0.105.3)*: Վերջինիս երկրորդ էպոնիմատը Ք. ա. 770 թ. էր, երբ, հավանաբար, Արգիշթին այլևս գահին չէր:*

[34] *Հետաքրքիր է, որ այդ արշավանքից ճիշտ երկու տարի առաջ, որը, մեր կարծիքով, համապատասխանում է Ք. ա. 781 թ., Արգիշթի I-ն արշավել էր վերինեփրատյան գոտու «խեթական» երկրների դեմ, այն է՝ Մելիտեա-Մելիդ, Թաբալ և այլն* (КУКН, 173 II5-24; CTU I, A

Ուրարտու ձեռնարկված ասորեստանյան չորրորդ արշավանքը կհամապատասխանի «Խորխորյան տարեգրության» տեղեկությանը՝ Արգիշթիի կառավարման 7-րդ (?) տարում Ասորեստանի զորքին հաղթելու մասին:

«Խորխորյան տարեգրություն»-ը Ասորեստանի հետ բախում Արգիշթիի կառավարման 8-րդ (?) տարվա համար չի հայտնում: Դա համապատասխանում է Ք. ա. 777 թ., երբ, իրոք, ասորեստանցիները զբաղված էին արամեական Իթուա ցեղախմբի դեմ պատերազմելով[35]*: Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս հակասություն չի առաջանում ասորեստանյան և ուրարտական աղբյուրների միջև:*

Ասորեստանյան էպոնիմների ցանկը Պան-Աշշուր-լամուրի էպոնիմատի դիմաց (Ք. ա. 776 թ.) վերստին արձանագրում է Ուրարտու արշավելու մասին: «Խորխորյան տարեգրություն»-ը այս անգամ չի հայտնում Ասորեստանի զորքին հաղթելու մասին, փոխարենը՝ հայտնում է մինչև «Ասորեստանի սահման»-ը հասնելու մասին (*ku-ṭè-a-di pa-ri* KUR*aš-šur-ni-ni* KUR*al-ga-ni*)[36]*: Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է միևնույն իրադարձությանը, ու այստեղ ևս երկու աղբյուրների տեղեկությունները չեն հակասում միմյանց:*

Ներգալ-էրեշի էպոնիմատի տարում (Ք. ա. 775 թ.), ինչպես վերը նշվեց, ասորեստանյան բանակն արշավել է դեպի «մայրիների լեռ»[37]*: «Խորխորյան տարեգրություն»-ը Ասորեստանի հետ բախում նույնպես չի արձանագրում*[38]*:*

Եվ, վերջապես, Իշթար-դուրիի էպոնիմատի տարում (Ք. ա. 774 թ.) տեղ է գտնում հերթական՝ թվով վեցերորդ արշավանքը դեպի Ուրարտու և, միաժամանակ, դեպի Նամրի (ana ^{mât}urar□i ^{mât}namri)*: «Խորխորյան տարեգրություն»-ը հայտնում է Սիրանի քաղաքը նվաճած մանայական զորքին հաղթելու, քաղաքը պաշարելու և վերագրավելու մասին*[39]*: Ընդ որում, այդ տարվա ռազմական գործողությունները ծավալվել են միմիայն Սիրանիի շուրջը, ինչը խոսում է այդ քաղաքի ռազ-*

8-3 II5–24)*: Այդ երկրներն ընկած էին ասորեստանյան ազդեցության գոտում, հետևաբար, Արգիշթիի արևմտյան արշավանքը շոշափում էր հենց Ասորեստանի շահերը: Ուստիև, կարելի է կարծել, որ ասորեստանյան պատասխան արշավանքին էր վերաբերելու Շամշի-իլուի ձեռք բերած հաղթանակը Արգիշթիի նկատմամբ: Նկատենք, որ Շամշի-իլուն ասորեստանյան տերության ողջ արևմտյան հատվածի և մասնավորապես՝ սիրիական տարածքների փաստացի տիրակալն էր և իրեն անվանում էր «Խաթթի երկրի կառավարիչ» (այդ մասին տե՛ս* A. K. G r a y s o n. Assyrian Officials and Power in the Ninth and Eighth Centuries.– "State Archives of Assyria Bulletin", 7/1, 1993, p. 27. *Մանրամասն տե՛ս նաև* A. F u c h s. Der Turtān Šamšī-ilu, S. 78sqq.)*:*

[35] A. M i l l a r d. *Նշվ. աշխ., էջ 38, 58:*

[36] КУКН, 173 IV36; CTU I, A 8-3 IV36.

[37] A. M i l l a r d. *Նշվ. աշխ., էջ 39, 58:*

[38] КУКН, 173 IV42-66; CTU I, A 8-3 IV42-66.

[39] КУКН, 173 IV67 – V10; CTU I, A 8-3 IV67 – V10.

մավարական նշանակության և դրան տիրելու համար ընթացած թեժ մարտերի մասին: Կարելի է մտածել, որ Նամրի արշավելու հետ մեկտեղ Ասորեստանը ռազմական օգնություն է ցուցաբերել Մանայի արքային ընդդեմ Ուրարտուի, ինչն էլ կարող էր արտացոլվել ասորեստանյան էպոնիմների ցանկում որպես Ուրարտու ձեռնարկված արշավանք: Ուրարտուի գլխավոր հակառակորդն այդ տարի, կարծում ենք, Մանայի արքան էր, ում հիշատակում է Արգիշթին առանց նրա անունը նշելու[40]*:*

Այսպիսով, կարծում ենք, որ նման վերակազմությունը համապատասխանում է ասորեստանյան և ուրարտական աղբյուրների տվյալներին ու այդ տվյալների միջև էական հակասություններ չի առաջացնում: Մյուս կողմից, դեռևս անպատասխան է մնում երկու հարց. ե՞րբ է Արգիշթին գահ բարձրացել և որքա՞ն է նա կառավարել:

Եթե ճիշտ է մեր մոտեցումը՝ Ք. ա. 779 թ. համարելու ասորեստանյան զորքին հաղթելու մասին «Խորխորյան տարեգրության» առաջին հիշատակությունը, ապա այդ դեպքում Արգիշթիի համար Գ. Մելիքիշվիլու առաջարկած գահակալության տարեթիվը պետք է առաջ բերել երկու տարով և այն ընդունել Ք. ա. 784 թ.:

Ցավոք, «Խորխորյան տարեգրության» սկզբնական հատվածը մեզ չի հասել և դժվար է ասել, թե արքայի գահակալության ո՞ր տարվան է վերաբերում տարեգրության առաջին տեղեկությունը՝ Դիաուխի ձեռնարկված արշավանքի մասին: Ընդ որում, այդ արշավանքը սկսվում է ikukani MU *«նույն տարում» բառերով*[41]*, ինչից պարզ է դառնում, որ դրան նախորդել է առնվազն մեկ այլ արշավանք: Գ. Մելիքիշվիլին ենթադրում էր, որ դիաուխյան արշավանքի տարվան պետք է նախորդեր ևս մեկ՝ արքայի գահակալության տարին*[42]*: Այդ հարցում նրա հետ համակարծիք էր նաև Ի. Դյակոնովը*[43]*: Այդպես է կարծում նաև Մ. Սալվինին*[44]*:*

Խնդրի հստակեցման համար անգնահատելի սկզբնաղբյուր է տարեգրության կրկնօրինակի մի հատվածը, որտեղ առկա է նաև Արգիշթիի գահակալության փաստի և տարբեր տարիների գլխավոր անցքերի արձանագրումը: Խոսքը վերաբերում է հին Վանի հայկական Սբ Սահակ եկեղեցուց հայտնաբերված կոթողների երկու բեկորներից առաջինին (այսուհետև՝ Կոթող Ա)[45]*: Չորս կողմից արձանագր-*

---

[40] [h*a-šO-O-b*]*i* KUR*ma-na-še* URU*si-ra-a-ni ha-i-la-a-ni… «լսեցի, (որ) մանացին (իմա՝ Մանայի արքան) Սիրանի (քաղաքը) գրավել է» (տե՛ս* КУКН, 173 IV74; CTU I, A 8-3 IV74)*:*

[41] КУКН, 173 Ix+5; CTU I, A 8-3 I5.

[42] Г. А. М е л и к и ш в и л и. *Նշվ. աշխ., էջ* 207:

[43] И. М. Д ь я к о н о в. *Նշվ. աշխ., էջ* 69, *ծնթ.* 1:

[44] M. S a l v i n i. Geschichte und Kultur der Urartäer, S. 59.

[45] КУКН, 174 A1-A4; CTU I, A 8-1.

ված և մոտ 110 տող ունեցող բեկորը ներկայացրել է կոթողի վերին հատվածը (նկ. 1–2):

Քառակող կոթողը արձանագրվել է ձախից աջ՝ ԴԿ («դիմային կողմ»), ԱԿ («աջ կողմ»), ՀԿ («հակառակ կողմ») և ՁԿ («ձախ կողմ») հաջորդականությամբ: Դա պնդելու համար կարելի է բերել մի քանի օրինակներ: Հեֆշեսորիկից (այժմ՝ Սավաջբք) գտնված կոթողն արձանագրվել է երեք կողմից՝ ԴԿ–ԱԿ–ՀԿ հաջորդականությամբ: Այդ կոթողի ՀԿ-ի վերջնամասում էլ արձանագրվել է, այսպես կոչված, «անեծքի բանաձև»-ը՝ ուղղված կոթողը վնասողներին[46]: Մուշից հայտնաբերված մեկ այլ կոթողի բեկոր, որն արձանագրված է չորս կողմից, նույնպես գրվել է ձախից աջ հաջորդականությամբ՝ ԴԿ–ԱԿ–ՀԿ–ՁԿ: Այստեղ տեքստն ավարտվում է ՁԿ-ում տրված «անեծքի բանաձև»-ով[47]: Նույն հաջորդականությամբ է արձանագրվել նաև Մովանայի կոթողը: Ընդ որում, վերջինիս ԴԿ–ԱԿ հատվածը ներկայացնում է ուրարտական տեքստը, ՀԿ–ՁԿ հատվածը՝ ասորեստանյան[48]: Հետևաբար, կասկած չկա, որ նույն հաջորդականությամբ պետք է արձանագրված լիներ նաև Սբ Սահակ եկեղեցուց հայտնաբերված կոթողը: Գ. Մելիքիշվիլու տեսակետը, որ կոթողի արձանագրությունը ԴԿ-ից հետո շարունակվել է ՀԿ-ում[49], ակնհայտորեն, սխալ է[50]:

Կոթող Ա-ի վերին հատվածում պահպանվել է հետևյալ իրադարձությունների նկարագրությունը.

ԴԿ – տրվում է Խալդի աստծո համար կոթող կանգնեցնելու «ներածական բանաձև»-ը, արքայական տիտղոսաշարը և «անեծքի բանաձև»-ը, արքայի գահակալության արձանագրումը և վերստին արքայական տիտղոսաշարը, ինչ-որ երկիր արշավելուն վերաբերող «վերնագրային բանաձև»-ը:

ԱԿ – տրվում է Դիաուխի ձեռնարկած արշավանքի նկարագրությունը:

ՀԿ – տրվում է Էթիունի ձեռնարկած արշավանքի նկարագրությունը և Կեխունի երկրի նվաճումը, Էրեբունիի հիմնադրումն ու Խատե և Ծուպա երկրներից բերված 6 հազ. 6 հարյուր զինվորների վերաբնակեցումը, նույն տարում դեպի Ուբուրդա ձեռնարկած արշավանքի «վերնագրային բանաձև»-ը:

ՁԿ – տրվում է Խալդի աստծո iniriaše-ին վերաբերող ընդարձակ, բայց քիչ հասկանալի տեքստ և դեպի Ուրմե ձեռնարկած արշավանքի նկարագրության սկիզբը:

Այն, որ ԴԿ-ը ներկայացրել է տարեգրության սկիզբը, կասկածից դուրս է, հակառակ այն փաստի, որ տեքստի սկզբնամաս է ներմուծվել նաև «անեծքի բանաձև»-

---

[46] CTU I, A 14-2.

[47] КУКН, 58; CTU I, A 5-7.

[48] CTU I, A 10-3.

[49] Г. А. Меликишвили. *Նշվ. աշխ., էջ 207–208:*

[50] *Տե՛ս* M. Salvini. *Նշվ. աշխ., էջ 58, 64 և հաջորդիվ:*

ը[51]: Մեզ հայտնի բոլոր օրինակները, որոնցում արձանագրվում է տվյալ կոթողը Խալդի աստծուն ընծայելու բանաձը (dh*aldie eyrie ini* (NA4)*pulusi kuguni*), *մշտապես ներկայացնում է արձանագրության սկիզբը[52]: Այդ նույնը վերաբերում է արքայի՝ գահ բարձրանալու կամ «հայրական տեղ»-ը զբաղեցնելու փաստի արձանագրումներին[53], ինչն առկա է նաև քննարկվող կոթողի վրա:*

Այստեղ կարևոր է, որ Կոթող Ա-ի՝ հատկապես ռազմական նվաճումներին վերաբերող տեղեկությունները հայտնի են նաև «Խորխորյան տարեգրություն»-ից: Վերջինիս տվյալներից դատելով՝ Արգիշթի Մենուայորդու դիաուխյան արշավանքը (պայմանական՝ x+1-ին տարի) տեղի է ունեցել էթիունյան արշավանքից և Կեխունի երկրի նվաճումից երեք տարի առաջ (x+4-րդ տարի): Այսինքն՝ կոթողի ԱԿ-ը պարունակել է արքայի կառավարման երեք տարիների նկարագրությունը, որոնցից մեկը դիաուխյան արշավանքն էր (նկ. 1): Մյուս կողմից, էթիունյան արշավանքից և Կեխունի երկրի նվաճումից մինչև Ուրմե երկրի նվաճումը (= x+13-րդ տարի) բաժանում է 9 տարի: Ըստ այդմ, պետք է մտածել, որ առնվազն 8 տարիների անցքեր, այդ թվում՝ ասսուրա-ուրարտական պատերազմները, արձանագրված են եղել կոթողի ՀԿ-ում՝ մեզ չհասած հատվածի մակերեսին (նկ. 2): Կոթողի ԴԿ-ի պահպանված հատվածի զբաղեցրած մակերեսը մոտավորապես հավասար է ՀԿ-ում տրված մեկ տարվա անցքերի ընդարձակ նկարագրությանը: Արդյո՞ք դա նշանակում է, որ ԴԿ-ի կորսված հատվածում տրված է եղել արքայի գահակալության ավելի քան 7 կամ 8 տարիների նկարագրությունը, ներառյալ՝ գահակալության տարին: Դա հնարավոր է թվում, քանի որ կոթողի ԱԿ-ի՝ շատ ավելի նեղ հատվածում, փաստորեն, ունենում ենք երեք տարիների նկարագրություն, ինչպես նշեցինք վերը:

Եթե դա այդպես է, իսկ այլ բան քիչ է հնարավոր ենթադրել, քանի որ Կոթող Ա-ի պահպանված բեկորի ԴԿ-ի տեքստը ներածական բանաձևերից հետո արդեն իսկ սկսում է ռազմական իրադարձությունների նկարագրությունը՝ հայտնելով ինչ-որ երկրի, թերևս, էթիունիի ապստամբ լինելու և այն Արգիշթիի առջև Խալդի աստծո կողմից խոնարհեցնելու մասին[54], ապա, փաստորեն, Արգիշթիի դիաուխյան արշավանքը պետք է տեղի ունեցած լիներ այդ իրադարձությունից մոտավորապես 6 կամ 7 տարի հետո, այն է՝ 1+6/7+1 տարում: Այդ դեպքում, Ք. ա. 779 թ., որը, մեր կարծիքով, համապատասխանելու է տարեգրության նշած x+5-րդ տարվան, լինելու էր արքայի գահակալության 12 կամ 13-րդ տարին: Հետևաբար, Արգիշթիի գահակալության սկիզբը պետք է թվագրել Ք. ա. 791 կամ 790 թվականով:

---

[51] *Տե՛ս նաև* Г. А. Меликишвили. *Նշվ. աշխ., էջ* 206:

[52] *Տե՛ս, օրինակ,* КУКН, 75$_{3-5}$; CTU I, A 5-17$_{3-7}$.

[53] *Տե՛ս, օրինակ,* КУКН, 424$_{3-4}$; CTU I, A 12-2 I$_{3-4}$.

[54] КУКН, 174 A3$_{22-26}$; CTU I, A 8-1$_{22-26}$.

Ինչ վերաբերում է արքայի գահակալության տարիների թվին, ապա այստեղ ևս կարելի է ունենալ որոշակի հստակություն:

Ըստ Գ. Մելիքիշվիլու՝ «Խորխորյան տարեգրություն»-ը ներկայացրել է Արգիշթիի կառավարման առաջին 15 տարիները[55]: Տարեգրության կրկնօրինակը, ըստ նրա, պարունակել է ևս 8 տարիների նկարագրությունը: Այսպիսով, Արգիշթիի համար նա ենթադրում էր առավելագույնը 23 տարվա կառավարում: Ք. ա. 786 թ. հիմք ընդունելու դեպքում՝ Արգիշթիի գահակալության ավարտը նա տեսնում էր Ք. ա. 764 թ.[56]: Ի. Դյակոնովն Արգիշթիի համար ենթադրում էր 22 տարվա գահակալության շրջան՝ Ք. ա. 780/779–759/758 թթ.[57]:

«Խորխորյան տարեգրության» մեջ 13 անգամ հիշատակվում է արքայի կառավարման տվյալ տարվա, այսպես կոչված, «ամփոփիչ բանաձև»-ը: Խոսքը վերաբերում է inanili arniušinili 1 MU/šusini šali zadubi՝ *«այս սխրագործությունները մեկ տարում արեցի» բանաձևին[58]: Մեր առաջարկած վերակազմության դեպքում պետք է ենթադրենք, որ տարեգրությունը ներկայացնելու էր ոչ պակաս, քան 20 կամ 21 տարիների պատմությունը (1+6/7+13):*

Հին Վանի հայկական Սբ Սահակ եկեղեցուց հայտնաբերված երկրորդ կոթողի բեկորը (այսուհետև՝ Կոթող Բ), որը սխալմամբ միավորվել էր Կոթող Ա-ի հետ և տեղիք տվել սխալ հաշվարկների[59], ի տարբերություն առաջինի, արձանագրված է միայն երկու կողմերից՝ ԴԿ և ՀԿ (նկ. 3)[60]: Բացի այդ, Կոթող Բ-ի բովանդակությունն էապես տարբերվում է «Խորխորյան տարեգրություն»-ից: Մասնավորապես, Կոթող Բ-ի պահպանված բեկորի ՀԿ-ում բավական մանրամասն ներկայացված է Դիաուխի ձեռնարկած արշավանքը[61]: Այդ արշավանքը հայտնի է նաև Հանաքի վիմագիր արձանագրությունից[62], ու թեև որոշ հեղինակներ միավորել են այդ արշա-

---

[55] Г. А. Меликишвили. *Նշվ. աշխ., էջ* 208:

[56] *Նույն տեղում, էջ* 210:

[57] И. М. Дьяконов. *Նշվ. աշխ., էջ 70, նույնի՝* История Мидии, с. 170–171, прим. 3.

[58] КУКН, 173, I_{16}, $II_{3, 24, 50}$, $III_{19, 45}$, $IV_{11-13, 41, 66}$, $V_{10, 32, 69}$, VI_{11}; CTU I, A 8-3 I_{16}, $II_{3, 24, 50}$, $III_{19, 45}$, $IV_{11-13, 41, 66}$, $V_{10, 32, 69}$, VI_{11}.

[59] *Դեռևս XX դարի սկզբին նման առաջին փորձն արել է Վալդեմար Բելքը* (W. Belck. Mittheilungen Ƒber armenische Streitfragen.– “Zeitschrift fƒbr Ethnologie”, 33, 1901, S. 298 sq.)*: Հմմտ. նաև՝* Г. А. Меликишвили. *Նշվ. աշխ., էջ 206–207: Որ քննարկվող բեկորները պատկանել են երկու տարբեր կոթողների՝ տե՛ս* M. Salvini. *Նշվ. աշխ., էջ 59: Արգիշթին, հնարավոր է, թողել է նաև երրորդ կոթողը, որից պահպանվել են երկու փոքր բեկորներ՝ չնչին տեղեկատվությամբ (տե՛ս* КУКН, 175a, b; CTU I, A 8-4, A 8-5*):*

[60] КУКН, 174 B1-B2; CTU I, A 8-2.

[61] КУКН, 174 $B1x+1-26$; CTU I, A 8-2 $Vo_{1'-26'}$.

[62] КУКН, 174 C; CTU I, A 8-7.

վանքը «Խորխորյան տարեգրության» մեջ և Կոթող Ա-ում ներկայացված դիաուխյան արշավանքի հետ, սակայն, ակնհայտորեն, խոսքը վերաբերում է այդ երկիր ձեռնարկված մեկ այլ արշավանքի[63]: Դրա վկայությունն է այն, որ տեքստերը ոչ միայն չեն կրկնում իրար, այլև՝ բացարձակ անհամապատասխանություն է առկա գերի տարված բնակչության և կենդանիների թվական տվյալների միջև: «Խորխորյան տարեգրության» մեջ նշվում են հանրագումարային թվեր, Կոթող Բ-ի քննարկվող հատվածում առկա են միայն Դիաուխիին վերաբերող թվական տվյալները, ընդ որում, որպես ավար տարված ձիերի թիվը նշվում է 4426, այն դեպքում[64], երբ «Խորխորյան տարեգրության» մեջ նշված հանրագումարային թիվը, որը վերաբերում է ողջ տարվա ընթացքում ձեռք բերված ավարին, կազմում է ընդամենը 1104[65]:

Կարծում ենք, որ Կոթող Բ-ում նկարագրված դիաուխյան արշավանքը կարող էր տեղ գտած լինել Արգիշթիի գահակալության առաջին մի քանի տարիների ընթացքում՝ նկարագրված լինելով Կոթող Ա-ի՝ մեզ չհասած միջին կամ ստորին հատվածի ԴԿ-ում (նկ. 1): Նույնը վերաբերում է Կոթող Բ-ի ՀԿ-ի պահպանված հատվածում դեպի Էթիունի իրականացված արշավանքի նկարագրությանը: Եթե ընդունենք, որ Կոթող Ա-ի ԴԿ-ում պակասավոր տեքստում հիշատակված երկիրը, որն ապստամբել էր, կարող է լինել Էթիունին[66], ապա այդ երկրի դեմ իրականացված արշավանքը, փաստորեն, լինելու էր Արգիշթիի առաջին ռազմական գործողությունը գահ բարձրանալուց հետո և կարելի է պնդել, որ Արգիշթին իր գահակալության առաջին մի քանի տարիներին առնվազն երկու անգամ արշավել է դեպի Էթիունի (տե՛ս աղյուսակը):

Կոթող Բ-ի ԴԿ-ում ներկայացված տեքստն արդեն համապատասխանում էր «Խորխորյան տարեգրության» II և III սյունակներում տրված իրադարձություններին, ու դրա կրկնօրինակն է: Հընթացս նշենք, որ մեր կողմից առաջարկված վերակազմության դեպքում պետք է ընդունել, որ Կոթող Բ-ի ՀԿ-ն իրականում ԴԿ-ն էր և հակառակը:

Յավոք, Կոթող Բ-ն շատ օգտակար չի կարող լինել Արգիշթիի գահակալության շրջանը հստակեցնելու համար: Դրանից հայտնի, սակայն, ուրարտական այլ տեքստերում չպահպանված դրվագները կարող են վերաբերել Արգիշթիի կառավարման առաջին տարիներին: Այստեղ նկատենք, որ թե՛ «Խորխորյան տարեգրության» մեջ, և թե՛ Կոթող Ա-ում Արգիշթիի գահակալությունը, ըստ էության, ավարտվում է նույն տեղում: «Խորխորյան տարեգրության» մեջ Արգիշթիի վերջին

---

[63] *Տե՛ս նաև* Н. В. А р у т ю н я н *Նշվ. աշխ., էջ 180–181,* M. S a l v i n i. *Նշվ. աշխ., էջ 59: Հմմտ.* Г. А. М е л и к и ш в и л и *Նշվ. աշխ., էջ* 207:

[64] КУКН, 174 B1$_{13}$; CTU I, A 8-2 Vo$_{13'}$.

[65] КУКН, 173 I$_{15}$; CTU I, A 8-3 I$_{15}$.

[66] КУКН, 174 A3$_{22-26}$, n. 9-10.

ռազմաքաղաքական ձեռնարկումը դեպի Ուրմե իրականացված արշավանքն էր: Դրան հաջորդող տեքստը, որով եզրափակվում է տարեգրության «քաղաքական» հատվածը, վերաբերում է Բամնի լեռան «փլվելուն» (երկրաշարժի՞), որը Արգիշթին վերագրում էր իրեն[67]: Տարեգրությունը դրանից հետո եզրափակում է «անեծքի բանաձև»-ը[68]: Հետևաբար, կարելի է մտածել, որ Կոթող Ա-ի ՀԿ-ի տեքստը ևս դեպի Ուրմե իրագործված արշավանքից հետո եզրափակվել է Բամնի լեռանը և Արգիշթիին վերաբերող վերը նշված հատվածով ու, հավանաբար, «անեծքի բանաձև»-ով (նկ. 2): Այդ դեպքում, ՀԿ-ում կունենանք միայն մեկ տարվա նկարագրություն, որով կոթողի տարիների թիվը կկազմի 20–21 տարի, այսինքն՝ այնքան, որքան որ «Խորխորյան տարեգրություն»-ը:

Այսպիսով, Մենուայի որդի Արգիշթիի գահակալության սկիզբը պետք է համարել Ք. ա. մոտ 791/790 թ., իսկ նրա համար կարող ենք ենթադրել շուրջ 20 տարիների գահակալության շրջան՝ առնվազն մինչև Ք. ա. 772/771 կամ 771/770 թ.[69]: Արգիշթիի որդի Սարդուրիի գահակալության սկզբի համար մեր կողմից առաջարկվող նոր տարեթիվը՝ Ք. ա. 771 թ., կարծում ենք, հաստատում է այս վարկածը[70]:

---

[67] КУКН, 173 V80 – VI20; CTU I, A 8-3 V80 – VI20.

[68] КУКН, 173 VIII; CTU I, A 8-3 VIII.

[69] *Գ. Մելիքիշվիլու կողմից ժամանակին որպես զուտ աշխատանքային վարկած առաջարկված Արգիշթի I-ի կառավարման թվականները՝ Ք. ա. 786–764 թթ., տասնամյակների ընթացքում արմատավորվեցին գիտության մեջ, իսկ Արգիշթիի գահակալության «5-րդ տարի»-ն՝ (Ք. ա. 782 թ.), ընդունվեց որպես Էրեբունի-Երևանի հիմնադրման տարեթիվ: Մինչդեռ, Էրեբունին հիմնադրվել է Արգիշթիի գահակալության 11/12-րդ տարում, որը համապատասխանում է Ք. ա. 780 թ.: Հետևաբար, Էրեբունիի հիմնադրման 2800-ամյակը լրանում է 2019 թ.:*

[70] *Տե՛ս* Y. H. G r e k y a n. The Regnal Years of the Urartian Kings Argišti Menuahi and Sarduri Argištihi.– “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, vol. 9/1, 2015, p. 91ff.

Աղյուսակ

Գահակալության տարին	Թվականը	Աղբյուրների ուղղությունը	«Խորխորյան տարեգրություն»	Հոդված Ա	Հոդված Բ
I տարի	Ք.ա. 791թ.	գահակալության տարին, ընդդեմ Էրիուքի Երկրի (?)	–	KUKN, 174 $A3_{1-28}$ CTU I, A 8-1 Ro_{1-28}	–
I / II տարի	Ք.ա. 790թ.	–	–	–	–
II / III տարի	Ք.ա. 789թ.	–	–	–	–
III / IV տարի	Ք.ա. 788թ.	–	–	–	–
IV / V տարի	Ք.ա. 787թ.	–	–	–	–
V / VI տարի	Ք.ա. 786թ.	–	–	–	–
VI / VII տարի	Ք.ա. 785թ.	Դիաուխի	–	–	KUKN, 174 $B1_{x+1-26}$ CTU I, A 8-2 $Vo_{1'-26'}$
VII / VIII տարի	Ք.ա. 784թ.	Էրիուքի, Լուշա, Կասաթբա և այլն	–	–	KUKN, 174 $B1_{x+27-40}$ CTU I, A 8-2 $Vo_{27'-40'}$
VIII / IX տարի	Ք.ա. 783թ.	Դիաուխի, Զարախա, Աբուքի	KUKN, 173 I_{x+2-16} CTU I, A 8-3 I_{2-16}	KUKN, 174 $A1_{1-28}$ CTU I, A 8-1 L d_{1-27}	–
IX / X տարի	Ք.ա. 782թ.	Էրիուքի, Արիլիանի, Անիշտերգա, Ուլուանի	KUKN, 173 I_{x+16} – II_3 CTU I, A 8-3 I_{16} – II_3	–	–
X / XI տարի	Ք.ա. 781թ.	Թարալ, Մելիտեա-Մելիդ	KUKN, 173 II_{5-24} CTU I, A 8-3 II_{5-24}	–	–
XI / XII տարի	Ք.ա. 780թ.	Էրիուքի, Կենտուքի և Ուրարտու, Էրեբունի քաղաքի հիմնադրումը	KUKN, 173 II_{25-53} CTU I, A 8-3 II_{25-53}	KUKN, 174 $A2_{1-30}$ CTU I, A 8-1 Vo_{1-30}	–
XII / XIII տարի	Ք.ա. 779թ.	ընդդեմ ասորեստանյան բանակի, Բուշտու, Բարիլուքի, Բաբշուա	KUKN, 173 II_{54} – III_{19} CTU I, A 8-3 II_{54} – III_{19}	–	–
XIII / XIV տարի	Ք.ա. 778թ.	ընդդեմ ասորեստանյան բանակի, Բուշտու, Տարիուքի	KUKN, 173 III_{20-45} CTU I, A 8-3 III_{20-45}	–	–
XIV / XV տարի	Ք.ա. 777թ.	Իրանի, Մանա, Բուշտու	KUKN, 173 III_{46} – IV_{13} CTU I, A 8-3 III_{46} – IV_{13}	–	–
XV / XVI տարի	Ք.ա. 776թ.	Մանա, Իրկիուքի՝ մինչև «Ասորեստանի սահմանն»-ը	KUKN, 173 IV_{14-41} CTU I, A 8-3 IV_{14-41}	–	KUKN, 174 $B2_{x+1-13}$ CTU I, A 8-2 $Ro_{1'-13'}$
XVI / XVII տարի	Ք.ա. 775թ.	Մանա, Բուշտու	KUKN, 173 IV_{42-66} CTU I, A 8-3 IV_{42-66}	–	KUKN, 174 $B2_{x+14-36}$ CTU I, A 8-2 $Ro_{14'-36'}$
XVII / XVIII տարի	Ք.ա. 774թ.	ընդդեմ մանայական բանակի, Արգիշթիխինիլի հիմնադրումը	KUKN, 173 IV_{67} – V_{10} CTU I, A 8-3 IV_{67} – V_{10}	–	KUKN, 174 $B2_{x+37-48}$ CTU I, A 8-2 $Ro_{37'-48'}$
XVIII / XIX տարի	Ք.ա. 773թ.	Տուսպաձինի խորի, ընդդեմ մանայական բանակի	KUKN, 173 V_{11-32} CTU I, A 8-3 V_{11-32}	–	–
XIX / XX տարի	Ք.ա. 772թ.	Մանա, Էրիուքի	KUKN, 173 V_{33-69} CTU I, A 8-3 V_{33-69}	–	–
XX / XXI տարի	Ք.ա. 771թ.	Տարիուքի, Ուրմե	KUKN, 173 V_{70} – VI_{11} CTU I, A 8-3 V_{70} – VI_{11}	KUKN, 174 $A4_{1-26}$ CTU I, A 8-1 L s_{1-26}	–
Նույն տարում (?)		Բանանի լեռան փլուզումը	KUKN, 173 VI_{12-20} CTU I, A 8-3 VI_{12-20}	–	–



Նկ. 1
Սբ Սահակ եկեղեցուց հայտնաբերված Կոթող Ա-ի
դիմային և աջ կողմերը



Նկ. 2
Սբ Սահակ եկեղեցուց հայտնաբերված Կոթող Ա-ի հակառակ և ձախ կողմերը



Նկ. 3
Սբ Սահակ եկեղեցուց հայտնաբերված Կոթող Բ-ի
դիմային և հակառակ կողմերը

я

К ВОПРОСУ О НОВОЙ ДАТИРОВКЕ ПЕРИОДА ПРАВЛЕНИЯ ЦАРЯ АРГИШТИ I

я

ЕРВАНД ГРЕКЯН

я

Резюме

я

Знаменитый советский урартолог Г. Меликишвили, исследуя основные письменные источники сына Менуа Аргишти I – так называемую «Хорхорскую летопись» и ее дубликат – и восстановив хронологическую последовательность изложенных в них событий, предлагал конкретизировать период правления царя и датировать его 786–764 гг. до н. э. Данная точка зрения, которую Г. Меликишвили выдвинул всего лишь в качестве рабочей гипотезы, с годами укоренилась в исторической науке, особенно в арменоведении. Именно на основе этой датировки 5-й год правления Аргишти I (782 г. до н. э., согласно Г. Меликишвили) был принят в качестве даты основания Эребуни–Еревана. В западной науке вплоть до последних лет период правления Аргишти I датировался 785/780–756 гг. до н. э. Аргументы, на основе которых предложены вышеупомянутые датировки, устарели и более не оправдывают себя. Новое изучение упомянутых источников и их реконструкция позволяют удревнить период правления Аргишти I на 5–7 лет. Согласно новой реконструкции, Аргишти I правил около 20 лет, в 791/790– 772/771 или 771/770 гг. до н. э. В свете новых исследований необходимо также пересмотреть датировки и последовательность походов урартского царя. Что касается традиционной датировки основания Эребуни, то оно имело место не на 5-м году правления Аргишти I, а на 11-м или 12-м году, что соответствует 780 г. до н. э. Следовательно, 2800-летие основания Эребуни исполняется в 2020 году.я

я

я

ON THE ISSUE OF REDATING THE REGNAL YEARS OF THE KING ARGIŠTI I

YERVAND GREKYAN

Summary

Prominent Soviet Urartologist G. Melikishvili, investigating the main written sources of Argišti I Menuahi – the so-called “Horhor Annals” and its duplicate, and reconstructing chronological sequence of the events described there, offered to concretize the period of king’s reign and date it to 786–764 B.C. This viewpoint, suggested by G. Melikishvili only as a working hypothesis, became well established with the years in scientific history and in Armenian studies, in particular. Basing especially on this dating, the “5th regnal year” of Argišti I (782 B. C. according to G. Melikishvili) was accepted as a date for foundation of Erebuni-Yerevan. In western studies until recently the government of Argišti I was dated to

785/780- 756 B.C. The arguments, based on which the above mentioned dating was suggested, are already outdated and can not really work. New study and reconstruction of the aforementioned sources suggest to date the government of Argišti I earlier for 5–7 years. According to the new reconstruction, Argišti I reigned around 20 years, between 791/790 – 772/771 or 771/770 B.C. In the light of new investigations it is also necessary to review the dates and sequence of campaigns of the Urartian king. As to the traditional dating of foundation year of Erebuni, it took place not in the 5th, but in the 11th or 12th year of the reign of Argišti I, which corresponds to 780 B.C. Thus, the 2800th anniversary of the foundation of Erebuni will be only in 2020.